

## Կ Ա Ր Ծ Ի Ք

**ԱՆԻ ԺՈՐԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՃՅՈՒՂԵՐԻ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ  
ՀԱՄԱՐ**

Հարկային համակարգի գործիքակազմը տնտեսության պետական կառավարման այն գործիքների համախումբն է, որի նշանակությունը դժվար է գերազնահատել: Այս առումով, տնտեսության պետական կառավարման արդյունավետ և հավասարակշռված համակարգեր ձևավորելու ճանապարհին շատ կարևոր է հարկային համակարգի կայացումն ու կիրառությունն այնպես, որ մի կողմից՝ ձևավորվեն նպաստավոր ներդրումային և գործարար միջավայր, հավասար մրցակցություն ու միատեսակ գործարար պայմաններ, մյուս կողմից՝ ապահովվի պետական եկամուտների անհրաժեշտ մակարդակը, ըստ էության իրականացվի հարկային համակարգի առջև դրված թերևս ամենից կարևոր՝ հասարակության տարբեր խմբերի միջև եկամուտների ու հանրային ռեսուրսների վերաբաշխման գործառույթը:

Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքակազմի դերն ու նշանակությունը ավելի է ընդգծվում ներկայիս արագ փոփոխվող աշխարհում, երբ ձևավորվում են նոր հարաբերություններ, եղածները փոփոխվում են, և անհրաժեշտություն է առաջանում համարժեքորեն արձագանքել նոր ստեղծվող իրողություններին ու մարտահրավերներին:

Մյուս կողմից, կայուն և կանխատեսելի հարկային միջավայրը կարևոր նախադրյալ է ազգային տնտեսության ներդրումային գրավչությունը բարձրացնելու և մրցունակ գործարար միջավայր ձևավորելու տեսանկյունից:

Գրախոսվող աշխատանքում իրականացված հետազոտությունները նվիրված են հարկային գործիքակազմի՝ որպես տնտեսության պետական կարգավորման արդյունավետ միջոցների կիրառությանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությանը և դրանց լուծմանն ուղղված նոր մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի **արդիականությունը և հրատապությունը**:

Ատենախոսության **կառուցվածքը** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության **առաջին՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների էությունը և տնտեսական բովանդակությունը» գլխում** քննարկվել են տնտեսության պետական կարգավորման հիմնական նպատակադրումներն ու խնդիրները, հարկային համակարգը՝ որպես այդ նպատակներին հասնելու միջավայր, հատուկ ուշադրություն է հատկացվել հարկային արտոնությունների ինստիտուցիոնալ բովանդակությանը:

Աշխատանքի **երկրորդ՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման առանձնահատկությունները ՀՀ-ում» գլխում** բացահայտվել ու վերլուծվել են հարկային քաղաքականության հիմնական ուղղությունները, հատուկ անդրադարձ է կատարվել հարկային կարգավորման ժամանակակից խնդիրներին:

Ատենախոսության **երրորդ՝ «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների զարգացման ուղղությունները» գլխում** բացահայտվել են ներկա փուլում իրականացվող հարկային քաղաքականության հիմնական

ուղղությունները, անդրադարձ է կատարվել հարկային կարգավորման սոցիալ-տնտեսական նպատակների համադրման հնարավորությունների գնահատմանը, վեր են հանվել հարկային վարչարարության հիմնական ու առաջնային ուղիները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդաբանական և տեղեկատվական առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ **հիմնավորվածություն և հավաստիություն:**

Աշխատանքի **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ բացահայտվել են հանրապետությունում հարկային եկամուտների հավաքագրման հիմնախնդիրները և մշակվել են հարկային քաղաքականության կատարելագործման և դրա կանխատեսելիության բարձրացմանն ուղղված մոտեցումներ, գնահատվել է առանձին հարկատեսակների գծով կարգավորիչ գործառույթի գործնական իրացման մակարդակը և դրա հետևանքները տնտեսական գործընթացների կարգավորման վրա, առաջարկվել են տնտեսության հարկային կարգավորման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև դրա տնտեսական և սոցիալական նպատակների արդյունավետ համադրման ուղիներ, մշակվել են մոտեցումներ հարկային արտոնությունների՝ որպես հարկային կարգավորման գործիքի կատարելագործման ուղղությամբ:

**Մեթոդաբանական և մեթոդական տեսանկյունից** հետազոտության արդյունքներն ընձեռում են որոշակի հնարավորություն կողմնորոշվել տնտեսության հարկային կարգավորման հիմնախնդիրների լուծման հարցում:

Ատենախոսության **գիտագործնական նշանակությունը** պայմանավորված է նրանով, որ ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել հանրապետությունում հարկային համակարգի հետագա զարգացմանն ուղղված քաղաքականությունների մշակման և ծրագրերի իրականացման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ կան **դիպողություններ**, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայի շուրջ ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները.

1. Ատենախոսության 3.1 կետում (էջ 87) հեղինակը կարևորել է տնտեսագիտորեն հիմնավորված հարկման բազաների սահմանումը՝ զուգորդված հարկման բազայից կատարվող նվազեցումների ճկուն կարգավորումներով: Այս քաղաքականությունն իրապես լայն տարածում է ստանում ժամանակակից աշխարհում, ուստի ներկայացված միտքը շատ արժեքավոր է: Այդուհանդերձ, որպեսզի այդ միտքը գիտագործնական նշանակություն ստանա, ցանկալի կլիներ ընդհանրական ձևակերպումներից բացի, ներկայացվեին նաև հեղինակի պատկերացումները կոնկրետ լուծումների մակարդակում:

2. Ատենախոսության 3.2 կետում (էջ 97) խոսելով գույքային հարկերի համակարգի արդյունավետության բարձրացման մասին՝ հեղինակն առաջարկում է պրոգրեսիվ գույքային հարկեր կիրառել այն բնակարանների նկատմամբ, որտեղ սեփականատերը փաստացի չի բնակվում (նմանատիպ առաջարկություն ներկայացվել է նաև չօգտագործվող հասարակական տարածքների մասով): Ընդունելով և կարևորելով առաջարկության նպատակադրումը՝ այդուհանդերձ գտնում ենք, որ այն գործնականում շատ դժվար իրագործելի և շատ «թանկ» վարչարարություն պահանջող քայլ կլինի: Ուստի, կարծում ենք, որ հեղինակը պետք է այս առաջարկությունը դեռևս համակողմանի ուսումնասիրի իր հետագա գիտագործնական աշխատանքներում:

3. Ատենախոսության 3.3 կետում (էջ 116) ՀՀ-ում կիրառվող հարկային բեռի գնահատականը որպես «ծանր», կարծում ենք, որ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, այդ թվում՝ համադրելի երկրներում սահմանված հարկային բեռի հետ համեմատության տեսանկյունից:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դիտողությունները որևէ կերպ չեն նսեմացնում հետազոտության արժանիքները: Դրանք հետապնդում են հանրապետությունում հարկային քաղաքականության և հարկային գործիքակազմի կատարելագործման հիմնախնդիրների լուծմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների արդյունավետության բարձրացման նպատակ:

Ա. Սարգսանի թեկնածուական ատենախոսությունն ունի կարևոր գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել հարկային քաղաքականության և հարկային համակարգի զարգացմանն ուղղված խնդիրների լուծման շրջանակներում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ա. Սարգսանի «Տնտեսության պետական կարգավորման հարկային գործիքների կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և

կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական  
աստիճանի շնորհմանը:

Տնտեսագիտության թեկնածու  
05.12.2022թ.



Ա. Պողոսյան

Պարոն Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻ  
ստորագրությունը հաստատում եմ՝  
Ֆինանսների նախարարության  
գլխավոր քարտուղար

05.12.2022թ.



Ա. Սարգսյան